ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 136 -Ա

ք.Արտաշատ

«17» [illegible] 2025թ.

«ՄԱՍԻՍԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 09.12.2025 թ. N 01/30.3/1/10697-2025 գրությունը՝

ՊԱՐԶԵՑԻ

2025 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը /այսուհետ՝ Տեսչական մարմին/ ստացել է Վարչապետի աշխատակազմի ղեկավարի թիվ 02/12.10/38315-2025 գրությունը, համաձայն որի՝ «Ինթերնեյշնլ Մասիս Տաբակ» ընկերության աշխատակից և Մասիս քաղաքի բնակիչ Էդվարդ Արամյանն իր գործընկերների և բազմաթիվ մասիսցիների անունից դիմում է ներկայացրել Մասիս քաղաքի աղբավայրից տարածվող ինտենսիվ ծխի հոտի վերաբերյալ:

Նշված դեպքի կապակցությամբ Տեսչական մարմնի կողմից հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակներում «Մասիսի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տարածքում կատարվել է ուսումնասիրություն և հայտնաբերվել ծխացող թույլ օջախներ: Վերոնշյալի վերաբերյալ Ընկերության տնօրեն Ֆելիքս Պողոսյանը տվել է հայտարարություն, ըստ որի ծխացող օջախների պատճառը ինքնաիրկիզումն է, ինչպես նաև հավելել, որ իրենց կողմից անմիջապես ձեռնարկվել են միջոցներ՝ օջախը մարելու ուղղությամբ:

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 219₁-րդ հոդվածի 1-ին պարբերության՝ «Տարածքային կառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների

վերաբերյալ գործերը՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 1-ին, 1.1-ին, 2-րդ, 8.2-րդ, 9-րդ, 10.5-րդ և **10.6-րդ** մասերով, 152.1-ին հոդվածի 4-րդ մասով և 54.5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերը»:

Օրենսգրքի 43.1-րդ հոդածի 10.6-րդ մասի համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման և կանխարգելման նպատակով աղբավայրի հսկողություն, ինչպես նաև աղբի ինքնայրումը կանխելու համար հակահրդեհային միջոցառումներ չիրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում աղբավայրը շահագործողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով»:

Համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Աղբավայրերը շահագործող օպերատորները շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման և կանխարգելման նպատակով իրականացնում են աղբավայրի հսկողություն, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ աղբի ինքնայրումը կանխելու համար»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պարզ է դառնում, որ աղբավայրի հսկողության, ինչպես նաև աղբի ինքնայրումը կանխելու համար հակահրդեհային միջոցառումներ չիրականացնելով՝ Ընկերության տնօրենը ցուցաբերել է անգործություն,այդ կերպ թույլ տալով առերևույթ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 10.6-րդ մասով, 219₁-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Մասիսի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի տնօրեն Ֆելիքս Պողոսյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Սահմանված կարգով ապահովել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը:
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Ֆելիքս Պողոսյանին:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Ստորագրող
ԱՐՏԱՎԱԶԴ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
2409881092

2025-12-17 11:47:24 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՐՏԱՎԱԶԴ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ